Azg
Ազգ
20 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1996. ՈՒՐԲԱԹ # 241 (1247)

Կառավարության «Սփյուռքի վարչությունը» կազմավորվելու է մրցույթով

Կառավարության մամուլի ծառայությունը երեկ հրապարակեց հետեւյալ հայտարարությունը. որից տարվում է, որ նոր ստեղծվելիք վարչությունը կազմավորվելու է անմիջապես կարգով՝ մրցույթով: Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտարարում է մրցույթ՝ նոր կազմավորվող Սփյուռքի վարչությունում աշխատելու համար: Եսփաստությունը կտրվի փոքրաթիվ, երիտասարդ, օտար լեզուների տիրապետող անձանց: Մրցույթին մասնակցել ցանկացողները մինչեւ 1997 թ. հունվարի 20-ը կարող են փաստաթղթերը ներկայացնել ՀՀ կառավարության հաղորդագրության ընդունելության բաժին՝ նշելով «Սփյուռքի վարչություն»:

ՄԱԿ-ում ԱՄՆ-ի նոր ներկայացուցիչը հայտնի է հայանպաստ կեցվածքով

ԱՄՆ Հայ դատի հանձնախմբի հաղորդման համաձայն, ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնի կողմից ՄԱԿ-ում նոր դեսպան նշանակված կոնգրեսմեն Բիլ Ռիչարդսոնը հայտնի է իր հայանպաստ կեցվածքով: Կոնգրեսում նա կողմ է քվեարկել բազմաթիվ հայանպաստ օրենքների, օրինակ՝ Հայաստանի օժանդակության, Արցախի հարցի արդար լուծման, Հայաստանի արգահատման դատաստանի եւ Հայկական ցեղասպանության ոգեկոչման օգտին:

«ԵՐԿԻՐ»

ԽՍՈՍԿՍՐՈՒԹՅՈՒՆ

Արմեն Սարգսյան. «Բյուջեն պետք է կազմվի իրականության վրա հիմնվելով»

Վերադառնալով Մեծ Բրիտանիայից, վարչապետ Արմեն Սարգսյանը երեկ լրագրողներին հայտնեց իր այցի արդյունքների մասին, նշելով, որ նախկին դեսպանի դարտակարությունները վայր դնելուց զատ, բազմաթիվ ոչ դաբեռնական հանդիպումներ է ունեցել բրիտանական ամենատարբեր մակարդակի դեսպանական դաբեռնյալների հետ:

Վարչապետ Սարգսյանը հանդիպել է նաեւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի ղեկավարության հետ եւ ընթացիկ ու առաջիկա ծրագրերի բվում քննարկել Հրազդանի ջերմակայանի 5-րդ մասնաբաժնի կառուցման եւ հայկական ատոմակայանի խնդիրները: Ընդ որում Եվրոպական բանկի ներկայացուցիչների հետ բանակցությունները շարունակվել են Երեւանում: Փաստորեն, 83 մլն-ոց վարկային ծրագիր, որից 57 մլն-ը դեսք է կատարեր Եվրոպական բանկը, իսկ 25 մլն-ը Հայաստանը, դեռ մեկ տարի առաջ դադարեցվել է: Էներգետիկայի նախարար Գագիկ Մարտիրոսյանի ասելով, երկու կողմերն էլ ձգձգել են ֆինանսավորումը: Նրա խոսքերով նախ ճիշտ չի հաշվարկվել ընդհանուր գումարը, բանկացիները տրանսպորտային ոլորտներին, եւ փաստորեն այժմ նույնիսկ գումար էլ պետք է, որպեսզի սկսված գործը ավարտին հասցվի: Վարչապետի ասելով, 83 մլն-ից մոտավորապես 50 մլն է միայն ծախսվել եւ երկու տարբեր կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքներ գոյություն են տալիս, որ իրոք ի սկզբանե օտար գնահատականներ են տրվել, եղել են օբյեկտիվ եւ նաեւ սուբյեկտիվ պատճառներ, եւ այժմ կառավարությունը, բացի ԵԲ-ի աշխատանքներից, իրեն էլ պետք է հետաքննություն տանի այդ ուղղությամբ:

«Լուծումը պետք է մակրոտնտեսական լինի», ասաց վարչապետը, միաժամանակ նշելով, որ տարբերակները բազմազան են, ընդհանուր ԵԲ-ն կարող է դառնալ ջերմակայանի բաժնետերերից մեկը:

Խոսելով բյուջեի շուրջ տարվող աշխատանքների մասին, վարչապետը նշեց, որ Միջազգային արժութային հիմնադրամի ներկայացուցիչները տվյալի ծանոթ են գնահատել 1996-ի արդյունքները, եւ կառավարությունը «Ես կարծում եմ, որ ոչնչ է իրականության վրա հիմնվելով կազմենք 1997 թ-ի բյուջեն» ասաց վարչապետը: Ի դեպ, նա հայտնեց, թե 1997 թ-ի բյուջեում եկամուտները ավելանալու են 1.3-ով: Վարչապետը ներկայացրեց նաեւ կառավարության նիստում քննարկված հարցերը: Մասնավորապես քննարկվել է սեփականաշնորհման ընթացքը, հաստատվել է 1997 թ-ի ծրագրում ընդգրկված ձեռնարկությունների ժամանակացույցը, որում է ընդգրկվել ոչ ռազմական ձեռնարկությունների եւ անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման եւ առաջնահերթացման 1996-1997 թթ. ծրագրում ընդգրկված ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացը կանոնակարգելու մասին: Նիստում հավանություն է տրվել նաեւ «Մաքսային սակագնի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին, որը կներկայացվի Ազգային ժողով: Վարչապետը հանձնարարել է մեկամսյա ժամկետում մշակել եւ կառավարություն ներկայացնել հարկային եւ մաքսային համակարգերի վերակազմավորման ծրագիրը: Պատասխանելով մեր այն հարցին, թե ինչո՞ւ է կարգավորվելու իր ընթացքը վիճակը, նկատի ունենալով նաեւ, որ ամանորում հրապարակվել է, թե իր կինը Նոնան Սարգսյանը Մեծ Բրիտանիայում Հայաստանի ժամանակավոր հավատարմատարի դարտակարությունները է կատարում, որն Սարգսյանն ասաց, որ իր ընտանիքը կինը եւ 2 որդիներն իրեն էին միացել դեռեւս 6 տարի առաջ, երբ ինքը Լոնդոնում դասավանդում էր: Եվ քանի որ ինքը շաս առաջ տեղափոխվեց Երեւան, ընտանիքի հետ կապված ցնծ խնդիր առաջացավ: Տիկին Նոնան Սարգսյանն ունի բանասերի կրթություն, բայց ավարտել է նաեւ Լոնդոնի համալսարանի արվեստաբանության բաժինը, աջակցել է դեսպանատան գործունեությանը, կատարելով դիվանագետի աշխատանք եւ հիմա իրոք ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար է Մեծ Բրիտանիայում: Բայց ուսումնական տարվա ավարտից հետո երեխաները եւ կինը կմիանան իրեն, իսկ մինչեւ այդ դեսք է համակերպվեն ստեղծված կացությանը:

Վարչապետը հայտնեց, որ ընտանիքի բացակայության դայմաններում իրեն իր ժամանակի մեծ մասը անցկացնում է կառավարությունում:

Հ. ՄԱՍՍԵՅԻՆ

ՆԻԺՍԻ ՆՈՍԳՈՐՈԴ

Մահացավ խորհրդային միջուկային ռումբի «հայրը»

ՍՈՍԿՎԱ, 19 ԴԵԿՏԵՄԲԵՐ. ՈՈՅԵՐ-ԱՐՍԵՆՊԵԵՍ. Նիժնի Նովգորոդի մոտ գտնվող Արզամաս-16 գիտահետազոտական կենտրոնում մահացավ միջուկային ֆիզիկայի ռուս մասնագետ Յուրի Խարիտոնը, որ համարվում էր խորհրդային միջուկային ռումբի հայրը: 92 տարեկան հասակում մահացած գիտնականը Արզամաս-16 գիտահետազոտական կայանի հիմնադիրն էր, որը դեկավարում էր 45 տարի: Լուսանկարը բվական չի կրում:

Թուրքմենական գազը տեղ չի հասնում դարտերի դատճառով

Նախարար Մարտիրոսյանը առաջիկա խոսանում է շտիտիխել Էներգամատակարարման գրաֆիկը

Դեկտեմբերի 18-ին ժամը 10:00-ին Հայաստանի եւ Վրաստանի գազամատակարարումը դադարեցվել է Անդրկովկասի գազատարող կազմակերպությունների կողմից ռուս-թուրքմենական համատեղ ձեռնարկությանն այս տարվա 11 ամիսների ընթացքում օգտագործած գազի դիմաց անհամապատասխանի վճարելու դատճառով: Թե Վրաստանը եւ թե Հայաստանը յուրաքանչյուրը դարտք է 15 մլն դոլար: Այդ մասին երեկ հայտարարեց Էներգետիկայի նախարար Գագիկ Մարտիրոսյանը, միաժամանակ նշելով, որ ամեն ինչ արվում է, որպեսզի գազի դադարեցումը յանդիսանա բնակչության էներգամատակարարման վրա: Մինչ այդ Հայաստան էր մուտք գործում օրական 5 մլն խմ գազ: Ստեղծված իրավիճակը նախարարը բացատրեց չվճարումներով, որի արդյունքում էներգետիկայի նախարարությունն այսօր ունի մոտ 75 մլն դոլար ներքին եւ արտաքին դարտք, այդ թվում նաեւ նախորդ տարիներից մնացած դարտքը: Նշելով, որ դա նաեւ համակարգային փոփոխությունների արդյունք է, նախարարը հույս հայտնեց, որ 1997 թ-ի կեսերին կդադարեցվի դարտքերի աճը, եւ ձեռնամուխ կլինեն կուտակվածի մարմանը: Ընդ որում, բնակչության չվճարումները, ըստ նրա, կազմում են գումարի կեսից ավելին:

Յ. Հ.

Իրանի նախագահը այցելեց Թուրքիա

ԱՆԿԱՐԱ, 19 ԴԵԿՏԵՄԲԵՐ ՆՏ: Հինգշաբթի օրը Իրանի նախագահ Ալի Ակբար Հաշեմի Ռաֆսանջանին հասավ այցով մեկնեց Թուրքիայի մայրաքաղաք Անկարա: Այցի ընթացքում քննարկվելու են երկու երկրների ամենի սերտ համագործակցության խնդիրներ:

Ռաֆսանջանիին ուղեկցում է 250 հոգուց բաղկացած դրամատիրությունը, որի կազմում են արտգործնախարար, տրանսպորտի, առեւտրի եւ նավթի նախարարներ:

Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի հետ բանակցություններից հետո Ռաֆսանջանին ծրագրում է այցելել նախահանգստյան եւ առեւտրական կենտրոններ Իզմիր քաղաքում: Երկրների ղեկավարները քննարկելու են Թուրքիայի մի դաղրանքներ, թե Իրանը թույլ է տալիս հարեւան անջատողականներին ճամբարներ ստեղծել իր տարածքում: Իրանը հերքում է այդ մեղադրանքները եւ իր հերթին՝ կոչ է անում միջոցներ ձեռք առնել Թուրքիայում բնակվող քրդ ազգաբնակչության դեմ, որոնք դեմ են Իրանի իսլամական ռեժիմին:

Թուրքիայի վարչապետ Նեջմեդդին Էրբականը հանդես է գալիս Իրանի եւ Թուրքիայի միջեւ ռազմատնտեսական բնագավառում սերտ համագործակցության օգտին, չնայած թուրքական բանակի ընդդիմանալուն:

ՀԱՄԱՌՈՏ

Մ. Նահանգներում ձերբակալվեց մեկ այլ լրտես

Մ. Նահանգների Ֆեդերալ հետաքննությունների գրասենյակը (FBI) ձերբակալեց իր 13 տարվա աշխատակիցներից մեկին: Ըստ Պիթերսոնի, նրան մեղադրելով նախկին Խորհրդային Միությանն ու այնուհետեւ Ռուսաստանին տվեալների գործակալների անուններ տրամադրելու եւ այլ գաղտնիքներ փոխանցելու մեջ: Այդ «ծառայության» համար նրա ստացած դուսարը եղել է 224 հազար դոլար: Լրտեսության մեջ մեղավոր ճանաչվելու դեպքում Պիթերսոնը սպառնում է ցմահ բանտարկություն:

Մարդու իրավունքների եվրոդական ատյանի նոր որոշումն ընդդեմ Թուրքիայի

Ըստ «Ռոյթերի», դեկտեմբերի 18-ին Մարդու իրավունքների եվրոդական ատյանը հարված է հասցրել Թուրքիայի վարչին՝ ընդունելով Կիպրոսի հույն հաղաքացու կողմից ընդդեմ Թուրքիայի իշխանություններին ներկայացված ամբաստանությունը եւ թուրքական բանտերում մի հարյուր հազարանոց գումարների ենթարկելու հարցը: Կիպրոսի նախագահ Գլավկոս Քլերիդեսը գոհունակություն է հայտնել Դյուսիայի Կիպրոսի հարցով եվրոդական ատյանի անմիաբանաբար որոշման կատարմանը:

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

ՍՈՒՐԼՈՒՄ

Հայկական ԱԷԿ-ը՝ 20 տարեկան

Մեծամորի ատոմակայանը, որն աշխարհին առավել հայտնի է հայկական ԱԷԿ անունով, հան տարեկան է։ Հնխորհրդային շրջ տարիների ընթացքում նա «չի ընել»։ Նախորդող 15 տարիներին միացված է եղել ԽՍՀՄ միասնական էներգահամակարգին եւ մեկ տարի (վերջին մեկ տարին) գործում է «ազատ» անբաժան ՄԱԳԱՏԷ-ի կառույցներում։

Երեկ դեկտեմբերի 19-ին, Ժողովրդական ատոմային եւ, բնականաբար, կիսաբանկնտային դարաշրջանում նշվեց կայանի հոբելյանը։ Լինչը վաստրեն ԱԷԿ-ի վերածնունդի նշում էր։ ԱԷԿ-ը հիմա արդեն փակ բաժնետիրական ընկերություն է, եւ գանգան միջոցներով կառված է աշխարհի ավելի քան 400 նմանատիպ կայաններ հետ։ «Նմանատիպ», հասկացությունն, ի դեպ, ավելի դեղեցիկ է։ Բանի տեղանքի երկրաբանական առանձնահատկությունները թույլ չեն տալիս հայկական ԱԷԿ-ը դասել մնացյալների շարքին։ Երկրի գեոտեկտոնական գոտում (այսինքն, խիստ ճկուն եւ շարժունակ հիմքի վրա) կառուցված այդ շինությունը այսօր հավատարիմ զգվար է դիտել թե «խորհրդային ծնունդ», կամ թե «խորհրդային վիժվածք» կարգավիճակում։ Յուրաքանչյուր օրինակը, կարծում ենք, ավելորդ է։ Այո, բեւեռ 5-ը հանրագիտարանը միակն է ոչ երկրագնդում, որտեղ ընդհանուր էներգիայի շուրջ 76 տոկոսը ստացվում է ԱԷԿ-ների շնորհիվ, սակայն չմոռանանք, որ նշված երկիրը գտնվում է հերձիչյան հիմքի վրա, իսկ հարավում մեր իրայացած Աշղերում կամ նոյնիսկ Յուրայի զանգվածում բնավ չեն հանդիպի եւ ոչ մի ԱԷԿ-ի։ Այնտեղ սոսկ շահագործվում են տրանի հանքավայրերը։

Նման դայմաններում (ընդ որում, ինչպես երկրաբանական, այնպես էլ սոցիալ-տնտեսական) կարեւոր է եւ բախտորոշ Մեծամորի ԱԷԿ-ի ներկայիս վիճակը, հետագա զարգացման նպատակադրվելն։ Սրա մասին խոսեց ԱԷԿ-ի տնօրեն Սարեն Ազատյանը, որը, իրավունք ստացած է եղել կայանի ակտիվներին։ 1976-ից աշխատելով այդ համակարգում։ Առանձնահատուկ շեշտվեց եղած սարքավորումների կայունության փաստը, ինչպես նաեւ աշխատակիցների չափազանց բարձր մասնագիտական որակը։ Հաղորդագրության ասածի, դարոն Ազատյանը բերեց հետեւյալ վիճակագրությունը։ վերաբողարկման մեկ տարվա ընթացքում, դրոֆիլակտիկ նկատառումներով նախատեսված էր ԱԷԿ-ի աշխատանքը կանգնեցնել եթե անգամ յուրաքանչյուր դեպքում 10 օր ժամկետով։ Այստեղ, այն կանգնեցվեց սոսկ մեկ անգամ, որի շնորհիվ հնարավոր եղավ «խնայել» ոչ միայն քանի օր, այլեւ ժամկետից շատ կանել։ 1996-ի համար նախատեսված 2 միլ 200 միլ կվտ էներգիայի «դրանը»։ Վերջին հասկացության վերաբերյալ նշենք, որ «դրանը», ըստ Սարեն Ազատյանի, ոչ թե նախկինի դեմ հիմնանոցական է, այդ ԱԷԿ-ի ներկայիս ներուժի արտացոլումը։ ԱԷԿ-ը այսօր գործում է իր հզորության 92 տոկոսով։ 370 մեգավատ հզորությամբ։

Դարոն Ազատյանը լավատեսորեն էր տրամադրված հայկական ատոմակայանի արդյունքի վերաբերյալ։ Մասնավորապես, նա նշեց ԱԷԿ-ի նոր բլոկի կառուցման մասին, որը դեռեւ է լինի էլ ավելի կատարյալ եւ վստահելի։ Շինարարական աշխատանքներն դեռ չեն սկսվել, սակայն նախատեսված է նոր բլոկի շահագործումը հանձնել մինչեւ 1999 թվականը։ «Նորի» շահագործումից մեկ տարի անց, հավանաբար, կդադարեցնի իր գործունեությունը հին (ներկայիս) բլոկը, որը «մահացության առիթ բնավ չի տա հատարակությանը»։ Ի դեպ, հայկական ԱԷԿ-ը դարձյանավորվածություն ունի ֆրանսիական FRAMATOME կազմակերպության հետ, օգտագործված վառելիքի դարսիկ, որը դեռեւ է լինի էլ ավելի կատարյալ եւ վստահելի։ Շինարարական աշխատանքներն դեռ չեն սկսվել, սակայն նախատեսված է նոր բլոկի շահագործումը հանձնել մինչեւ 1999 թվականը։ «Նորի» շահագործումից մեկ տարի անց, հավանաբար, կդադարեցնի իր գործունեությունը հին (ներկայիս) բլոկը, որը «մահացության առիթ բնավ չի տա հատարակությանը»։ Ի դեպ, հայկական ԱԷԿ-ը դարձյանավորվածություն ունի ֆրանսիական FRAMATOME կազմակերպության հետ, օգտագործված վառելիքի դարսիկ,



ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ

Միջադեպի ժամանակ հայ զինվորները գործել են ըստ կանոնակարգի

ԵՐԵՎԱՆ, 19 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ։ Դեկտեմբերի 17-ին, ժամը 13-ին Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի հայ-վրացա-ադրբեջանական սահմանահատվածում տեղի ունեցավ հանդիպում հայկական եւ վրացական դաշտիրակությունների միջեւ։

Մեր դաշտիրակությունը գլխավորում էր ՀՀ դաշտպանության նախարարության սահմանային կոմիսար, փոխգնդապետ Վարազդատ Ճորգնյանը։

Հանդիպման առիթ էր հանդիսացել նույն սահմանահատվածում դեկտեմբերի 14-ին տեղի ունեցած հայ-վրացական միջադեպը, որի ժամանակ զոհվել է Վրաստանի մեկ հաղթաթի։

Արմենպրեսի թղթակցին հայտնի դարձավ, որ հանդիպման ընթացքում վրացական կողմը փորձել է ողջ դատապարտությունը գցել հայկական կողմի վրա։

Մեր դաշտիրակությունը, մանրակրկիտ ուսումնասիրելով միջադեպի դաշտառները, լիարժեք դատապարտել է տվել վրացական կողմին՝ ողջ մեղքը բողնելով նրանց հաղթաթիների վրա, որոնք առանց նախազգուշացման անցել են սահմանը եւ հայտնվել մեր դաշտպանական դիրքերից 35-40 մետր հեռավորության վրա։ Մեր զինվորների նախազգուշական ոչ մի խրախանք նրանց կողմից չի կատարվել։ Ի դեպ, զինված նրանք եղել են։

Հանդիպման ընթացքում կողմերը եկել են այն համոզման, որ հայ զինվորները գործել են համաձայն կանոնակարգի։

Իգդիրի նահանգապետը Արարատի մարզպետարանում

ԵՐԵՎԱՆ, 19 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ։ Դեկտեմբերի 19-ին Իգդիրի (Թուրքիա) նահանգապետ Շամսեդին Ուզուն Արարատի մարզպետարանում հանդիպում ունեցավ մարզպետ Դավիթ Զադոյանի, ՀՀ արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ Արամ Վարդանյանի եւ «Հրազդանմաշ» փակ բաժնետիրական ընկերության նախագահ Թելման Տեր-Պետրոսյանի հետ։

Հանդիպմանը, որին ներկա էին Իգդիրի նահանգի այլ դեկավարներ, ներկայվեցին սահմանային փոխհարաբերություններին, Արարատի եւ Իգդիրի, ինչպես նաեւ Իգդիրի եւ Հայաստանի գործարարների համագործակցությանն առնչվող հարցեր։ ՀՀ արդյունաբերողների եւ գործարարների միության կողմից նահանգապետին հանձնվեց Իգդիրի գործարարների Հայաստան այցելելու առաջարկ-հրավեր։

Հանդիպման ընթացքում երկուստեք նշվեց, որ կան հայ-թուրքական տնտեսական, մասնավորապես առեւտրական համագործակցության իսկայական հնարավորություններ, որոնք ներկայումս չեն օգտագործվում։ Պայմանավորվածություն ձեռք բերվեց նման հանդիպումները դարձնել պարբերական։

ԵՐԵՎԱՆ

Քաղաքաշինարանը ձմռանը լրջորեն է նախապատրաստվում

ԵՐԵՎԱՆ, 19 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ։ Երեւանի քաղաքաշինության Վանո Սիրադեղյանն օրերս ստորագրել է կարգադրություն «1996-97 թթ. ձմռան ընթացքում սանմաքրման աշխատանքները կոորդինացնելու եւ իրականացնելու մասին»։ Ըստ որի մայրաքաղաքում գործող կամ տնտեսվարող սուբյեկտները, անկախ սեփականության ձեւից, դատապարտում են իրենց գործելու կամ գտնվելու վայրի հարակից տարածքները ձյունից եւ սառույցից մաքրելու, ինչպես նաեւ դատված սանիտարական եւ բարեկարգ վիճակի համար։ Քաղաքաշինարանի բնական գոտիների դահիճանության եւ բարեկարգման բաժնին հանձնարարվել է անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել քաղաքի ճանապարհները եւ մայթերը ձյունից եւ սառույցից ժամանակին մաքրելու համար, իսկ անհրաժեշտության դեպքում աղահովել նաեւ սանմաքրման ավտոձեռնարկությունների փոխհամագործակցությունը։

Քաղաքաշինարանի լրատվական բաժնի հաղորդագրության համաձայն, Վ. Սիրադեղյանը համայնքների դեկավարներին հանձնարարել է անհրաժեշտության դեպքում սանմաքրման ավտոձեռնարկություններին տրամադրել համայնքներում գտնվող կազմակերպությունների (անկախ նրանց գերատեսչական դատկանելությունից) ենթակայության տակ գտնվող մեքենաներն ու մեխանիզմները։

Աշխատանքներն արդյունավետ իրականացնելու նդատակով սանմաքրման ավտոձեռնարկություններում սահմանվել է շուրջօրյա հերթապահություն։

ԱՆՂՐԱՂԱՐԴ

ՀՕՖ-ը՝ «կտրոնակեղծության» անմասնակից

«Կտրոնակեղծության» վերջին դրսեւորման բնակչության ամենաանդատահով խավին հասցեագրված հացի կտրոնների կեղծման «գործին» առնչվող վերջին հրապարակման համաձայն («Հացի ավել կտրոն այնուամենայնիվ տրագրվել է», «Մոլորակ»), սոցապ նախարարության տրարանը, ավել կտրոններ տրելով (112 հազար 650 կտրոնի փոխարեն 115000) կատարել է ՀՕՖ դատվերը։ Նման կեղծումն առնվազն տարակուսելի թվաց ՀՕՖ-ի նման ծանրակշիռ կազմակերպության համար, ուստի, տեղեկությունը ճշտելու համար դիմեցինք ՀՕՖ լրատվական ծառայությանը։ Պարզվեց, որ վերջինիս դեկավարությունը դատաշնադես մերժում է իր առնչությունը «կտրոնային արկածախնդրությանը»։ ՀՕՖ խնդիրը կտրոններով բաշխվող հացի համար անհրաժեշտ գալուստի ադահովումն է, եւ սոցապ նախարարության տրարանի դատվիրատուն լինելու վարկածն առնվազն անհասկանալի է։

Ինչպես հայտնի է, կտրոնների արժանացած հաղթաթների ընտրությունը կատարվել է «Փարոսի» ցուցակներով, ոչ զավոխ, դժվարությամբ են մաքրվում առավել հասատուն կեղծիքներից՝ ոչ միշտ արտացոլելով ընտանիքների իրական կարիքավորությունը։ Այդ ցուցակներում, օրինակ, հայտնվում են դահեստային (վարձով տրվող բնակարաններում) որդես միայնակ բոլակառուներ գրանցված կուսակցություններ, մինչ խնամի տակ անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքները, որոնց կերակրողներն, ասենք, գիտաշխատողներ են, ուսուցիչներ, գրադարանների կամ բյուջետային աշխատավարձերով «սնվող» հիմնարկությունների այլ աշխատակիցներ, որդես կանոն, բացակայում են կարիքավորների ցուցակներից։ Ուստի եւ «ընից մազ դոկելու» մեջ վարդեցացած «կարիքավորների» մի բանակ, ծանրքների եւ հարեւանների զարմացած հայացքների տակ, առոտ-փառոտ շարունակում է օգտվել մարդասիրական օգնությունից, մանավորապես, կգ-ը 20 դրամով վաճառվող հացի կտրոններից։ Սակայն «Փարոսի» կատարելագործման գործընթացը շարունակվում է եւ մի օր, երեւի՝ կրերի ցանկալի արդյունք։ Հուսանք, որ այն ժամանակ օգնություն ակնկալող մարդկանց թիվն, այնուամենայնիվ, նվազած կլինի։

Է. Պ.

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Խախտումներ են հայտնաբերվել բենզինի վաճառքի եւ հացաթխման հիմնարկներում

ԵՐԵՎԱՆ, 19 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ։ Երեւանի 4 շրջաններում կատարված ստուգումների արդյունքների համաձայն բենզինի լցակայանների 80%-ում, բենզինի վաճառքը իրականացվում է մեծ խախտումներով։ Ինչպես Նոյյան տաղանի թղթակցին հայտնեց Հայդեսստանդարտի աղատողների իրավունքների դեսական վերահսկողության բաժնի դետ Գեորգ Գյոզալյանը, Երեւանի գրեթե բոլոր բենզալցման կրդակներն այսօր գործում են առանց նորմատիվ վաստաթղթերի, իրենց կառուցվածքով ու հարմարություններով չեն համաձայնեցվում անվտանգության դահանջներին։

Ըստ Գեորգ Գյոզալյանի, դարզվել է նաեւ, որ բաքերի տարողությունը, որոնցով իրականացվում է բենզինի վաճառքը, առնվազն 2-3 լիտրով դակաս է նրանց անվանական տարողությունից։

Գեորգ Գյոզալյանը հայտնեց նաեւ, որ վերջերս Երեւանի 30 մասնավոր հացաթխման վառարանում անցկացված ստուգումների արդյունքների համաձայն, հացի որակը չի համադատասխանում դահանջվող չափանիշներին։ բրվայնությունը բարձր է մոտ 5 անգամ, իսկ հաբը դակաս է 150-200 գրամով։

Ըստ Գեորգ Գյոզալյանի, Հայդեսստանդարտի կողմից համադատասխան կարգադրագրեր են դարկվել բոլոր այն կրդակներին եւ վառարանին, որոնցում հայտնաբերվել են խախտումներ։ Կրդակների առջեւ դահանջ է դրված նշված ժամկետում ձեռք բերել չափիչ սարքեր ու դահանջել անվտանգության նորմերը։ Այս դահանջները չկատարելու դեպքում այդ կրդակների տերերի դեմ կհարուցվի քրեական գործ։

Ըստ Գեորգ Գյոզալյանի, վերջերս բենզինի կրդակների մոտ 30%-ում արդեն իրականացվել են համապատասխան ձեռնարկումներ։

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱԺՄ համաժողովի տեղի կունենա դեկտեմբերի 21-ին շաբաթ օրը, ժամը 10-ին, Ստանիսլավսկու անվան թատրոնի շենքում։

ԱԺՄ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

«ԱԶԳ» ՕՐԱԳՐԵՐԹ
Հասցեագրման 2 տող
Գլխավոր եւ հասցեագիր
«Ազգ» թերթի հրատարակչություն
Երեւան 375010, Խանջյանի փող. 47
Հեռ. 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@armenia.com
Գլխավոր խմբագիր
ՍԱՄՈՒԷԼ ԱԲԵՏԻՍՅԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍԵՍՅԱՆ / հեռ. 562863
A STYLE համակարգչային
ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարվածք
«Ազգ» թերթ
Թղթակը «Ազգին» դատկանում է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Khanjyan st.
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՊԱՏՄԱԳԻՏ

ԵՐԵՎԱՆ

Պարզաբանում է ՀՀ գերագույն դատարանի անդամ Ալբերտ Հակոբյանը

ԵՐԵՎԱՆ, 19 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. ՀՀ ՆԳ նախարարի 1994-95 թթ. խորհրդատու, հետագայում օգնական Արամ Պետրոսյանի և նրա գործընկերների դեմ հարուցված քրեական գործի դեկտեմբերի 17-ին սկսած լսումը դեկտեմբերի 19-ին շկայացավ. Գերագույն դատարանի շենքում ազատ դահլիճ չլինելու պատճառով. Հարուցված քրեական գործի որոշ մանրամասների վերաբերյալ պարզաբանումների ակնկալիքով Նոյյան տաղանի թղթակիցը դիմեց ՀՀ Գերագույն դատարանի անդամ, նշված գործով քննիչ նիստերը նախագահող Ալբերտ Հակոբյանին.

Համաձայն ՆԳՆ 6-րդ վարչության ղեկավար Վանիկ Հոթոյանի կողմից կազմված քրեական գործի, մեղադրանք է ներկայացված 8 անձանց. Արամ Պետրոսյանին (ՀՀ քրեական օրենսգրքի 90 հոդվածի 4-րդ մասով, 182 հոդվածի 2-րդ մասով և 232 հոդվածի առաջին մասով), Վլադիմիր Ավետիսյանին (90 հոդվածի 4-րդ մասով, 162 հոդվածի 4-րդ մասով), Մանուկ Լոռեսյանին (90 հոդվածի 4-րդ մասով, 162 հոդվածի 4-րդ մասով), Արմենակ Այվազյանին (17.90 հոդվածի 4-րդ մասով 162 հոդվածի 4-րդ մաս), Թամարա Նարիջանյանին (17.90 հոդվածի 4-րդ մաս, 162 հոդվածի 4-րդ մաս), Արսյոմ Այնմանյանին (17.90 հոդվածի 4-րդ մաս), Սամվել Սիմոնյանին (17.90 հոդվածի 1-ին մաս), Արմեն Օհանյանին (17.90 հոդվածի 4-րդ մաս):

Ինչպես պարզաբանեց Ա. Հակոբյանը, ՀՀ քրեական օրենսգրքի 90 հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է ներկայացվում առանձնապես խոշոր չափերի հասնող գումարի յուրացման համար (6-12 տարի ազատազրկում), 182 հոդվածի 2-րդ մասով պաշտոնական դիրքի չարաշահման համար (2-8 տարի ազատազրկում), 232 հոդվածի 1-ին մասով ապօրինի կիրառով զենք, զինամթերք կրելու համար (մինչև 5 տարի ազատազրկում), 17.90 հոդվածի 4-րդ մասով հանցակցության-օժանդակության համար (6-12 տարի ազատազրկում):

Ցնցված այն իրանից, որ ամբաստանյալ Ա. Պետրոսյանը դատական նիստում մերժում էր իրեն ներկայացված մեղադրանքները, դատավոր Ա. Հակոբյանը տեղեկացրեց, որ ամբաստանյալը քննության ընթացքում մասնակցաբեռ ընդունել է դրանք. 1994 թ. աշնանից մինչև 1996 թ. Ա. Պետրոսյանը 5 բանկերից «Կրեդիս Մերչիս», «Կրեդիս Երևան», «Արդիբանկ», «Հայներարս բանկ», «Լենդ» ստացել է 32 վարկ, որից 17-ը, ինչպես ճշտեց դատավորը, մինչ այժմ մարել է վերամարկավորման հիման վրա. Համաձայն քրեական գործի նյութերի, ամբաստանյալի տնօրինության տակ գտնվող կանխիկ ստացված գումարներից 125 մլն դրամից ավել նա օգտագործել է իր կողմից ստեղծած մի շարք սահմանափակ ընկերությունների համար ապրանքանյութական արժեքներ ձեռք բերելու և օրինական այդ ծախսերի համար, իսկ շուրջ 245 մլն դրամի գումար «հավելյալ» ժամանակին զանգատվել է, որ իր դրանցից ստացված օգուտն ավելի քիչ է եղել, քան վնասը.

Դատախազական մասնիններն իրենց վերաբերմունքը կարտահայտեն դեռևս 1995 թ. հանրապետության դատախազության կողմից հարուցված քրեական գործի քննության ավարտից հետո. Իսկ առայժմ վախտասի մեջ գտնվող Ա. Հայրապետյանը հետախուզվում է Ինտերպոլի կողմից.

«Ազգի» կողմից.– Չարտացնում է Արմենակի անհեղկությունը Հայաստանին ոստիկանով 2 ձկնարտանվերի կատարելագործման: Դեռևս 1992 թ.-ին մեր ձկնարդյունաբերության մասին «Ազգի» հրապարակած տարբեր հարցազրույցներում այդ մասին խոսել է. 1991 թ.-ին Հայաստանի կառավարության կողմից հատկացված էժան գնով այդ ձկնարտանվերի ձեռքբերումը ժամանակին հանարվում էր հույսով գործարք, որ Հայաստանին երբ ոչ ձկնամթերք մեկ անգամ ներկրված 60 տոննա ձուկը փչացավ մեր ոստիկաններից մեկում, գոնե որոշ եկամուտ կարող էր առաջանալ. Այժմ ելնելով մեղադրներ գտնելու ժամանակը. Մակայն չոչեմ է մոռանալ, որ մի քանի տարի առաջ եղել են նաև միայնական սխալ տնօրինումներ, երբ ձկնարտանվերը մեկ դրվել են մի կոմբինատներից մեկի. մեկ ոչտոտ բանջարեղենի գիրուտայությունների տնօրինության տակ. մինչև նավերը լցրացել են հետո հանումներում. Իսկ այսպես, դրանց մեկը հայտնվել է օվկիանոսի հատակում.

ԱԿԱԴԵՄԻԱ

Անիի պահպանությունը պետք է իրականացվի Հայաստանի և Թուրքիայի համատեղ ջանքերով

ԵՐԵՎԱՆ, 19 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի ուսումնասիրման և պահպանության միջազգային գիտական կենտրոնի, ինչպես նաև Շիրակի մարզի ներկայացուցչության հետ համատեղ որոշում է ընդունել ՀՀ կառավարության ճնշարկմանը ներկայացնել Թուրքիայի տարածքում գտնվող Անիի ավերակների ուսումնասիրման և հետագա պահպանության ու այդ կապակցությամբ Թուրքիայի հետ համագործակցության ընդլայնման հարցերը.

Այս հարցը տարիներ շարունակ բազմիցս է բարձրացվել, բայց մինչև օրս լուծում չի ստացել. Նշվում է, որ համաշխարհային մշակութային արժեք ունեցող հուշարձանների պահպանությունը զույգ կողմերը պարտավորվել են ապահովել մի շարք միջազգային փաստաթղթերի ստորագրմամբ.

Որոշման մեջ հատուկ ուշադրություն է դարձվել Անիի հայկական Մայր տաճարին, որը Թուրքիայի տարածքը եւս ցնցած Սպիտակի երկրաշարժից հետո ենթարկվում է հետագա ավերման վտանգին. Այս տաճարի հարգարժայքը նշվելու է 2001 թվականին.

„Նշվել է նաեւ, որ հայկական կողմը պատրաստ է թանձնելու վերականգնողական եւ շինարարական աշխատանքների կատարումը, ներառյալ ծախսերը.

Թուրքական կողմին առաջարկվում է Անիի գոտին հայտարարել միջազգային բանգարան-արգելոց՝ հայթուրքական տնձրիությունների հովանավորությամբ. Թանգարանի կազմում ենթադրվում է ընդգրկել նաեւ Թուրքիային սահմանակից, սահմանային Ախուրյան գետի մյուս ափին, 33 Շիրակի մարզում գտնվող պատմա-ճարտարապետական հուշարձանները.

ՆՏ. Անիի ուսումնասիրության վերջին գիտարշավը տեղի է ունեցել 1916 թ.՝ խոշորագույն արեւելագետների կողմից, ակադեմիկոս Նիկոլայոս Մառի ղեկավարությամբ. Երբ 1918 թ. այդ տարածքը անցավ Թուրքիային, պատմա-ճարտարապետական հուշարձանների հետագոյման ամբողջ աշխատանքը կատարվում էր արխիվային նյութերի հիման վրա.

Մոսկվայում կազմավորվում է գյումրեցիների համայնք

Մոսկվայում ապրող գյումրեցիների համայնքը այսուհետ իր գործունեությունը կծավալի Ռուսաստանի մայրաքաղաքում. Այդ որոշումն ընդունվեց երեկ Գյումրիի մարզպետ Ս. Ղարարաս Գոնցյանի եւ Մոսկվայում «Լենինական» բիզնեսի ներկայացուցիչների հանդիպման ժամանակ. Այնուհետեւ որն Գոնցյանը պատասխանեց ներկաների հետաքրքրող հարցերին եւ բացեց հաճելի տպավորություն. Հանդիպման մասնակիցները խնամյան հարազատ քաղաքի վերականգնման համար անել այն ամենը, ինչը կարելի է իրենցից. Ղարարաս Գոնցյանը Մոսկվայում հանդիպեց նաեւ Ռուսաստանի մի շարք գործիչների կառավարության անդամների հետ, ինչպես նաեւ մասնակցեց Մարտ Բաբայանյանի 75-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառմանը. Երեկ նա վերադարձավ Հայաստան.

ԼՈՒՍԻՆ ԳԱՐԵԳԻՆՅԱՆ.
Մոսկվա

«Շեն-Ֆրանսի» նպաստակն է լքված գյուղերի վերականգնումն ու բնակեցումը

«Շեն-Ֆրանս» անունը անծանոթ չէ ֆրանսահայ գաղութին. 1990 թ.-ի վեր միությունը գործել է իբրեւ սվյուռքյան միավոր, որի հիմնական կազմը՝ հայաստանյան կորիզը ձեւավորվել է 1988 թ. պոլիտեխնիկականի մի խումբ գաղափարական աշխատակիցներից. «Շեն» միության հիմնական նպաստակն է փրկել Հայաստանի սահմանամերձ գյուղերը. Ընդհանուր առմամբ, որպես աշխատանքի դաշտ, ընտրված է Արցախը եւ նրա սահմանային լքված գյուղերի վերականգնումն ու բնակեցումը. Հիմնադրման օրից ի վեր «Շենը» իր միջոցներով ու ջանքերով իրագործել է հետեւյալ աշխատանքները. Ստեփանակերտի Արմենավան թաղամասում կառուցվել են 17 փայտաշեն տներ, որոնք հատկացվել են Սումգայիթից բռնագաղթած հայրենակիցներին. Վերականգնվել է Հադրութի շրջանի Սպիտակաշեն գյուղը, որը լքված էր դեռեւս 1960-ական թվականներից. Այնուհետեւ «Շենի» Հայաստանի միավորը «Շեն-Ֆրանսի» հետ համատեղ իրագործել է Շուշիի շրջանի Բերդաձոր ենթաշրջանը Գորիս-Ստեփանակերտ մայրուղուն կպող 18 մեծ երկայնքով կամրջի շինարարությունը, Գորիսի Խոզնավար եւ Ներքին Խնձորեսկ գյուղերում կառուցել է տներ, իսկ վերջինում նաեւ բուժկենտրոն. 1994-96 թթ. վերակառուցել եւ բնակեցրել է ԼՂՀ Հադրութի շրջանի Արփագետիկ, Քաջաթաղի շրջանի Հարար, Աղավնատուն եւ Խայզեթիկ գյուղերը.

«Շենը» հետաքրքրած է կոնկրետ նպաստակներ, որոնք ներառում են միմյանց լրացնող գործեր. Աշխատանքներից հիմնականն է ճանապարհաշինարարությունը՝ երկրի տարածքում հաղորդակցվող կապը կատարելագործելու նպաստակով եւ գյուղերի շենացումը. Գորիսից Հադրութ կառուցվող գիծը Ստեփանակերտ-Լաչին մայրուղուն զուգահեռ երկրորդ ճանապարհն է, որի իրականացման ծրագիրը բաժանվել է երեք հիմնական փուլերի. Առաջին փուլն արդեն ավարտված է, իսկ ամբողջական ավարտը նախատեսված է 1998 թ. Ճանապարհի կարեւորությունը գնահատվում է հեղինակավոր առումով. Նախ խնայվում է վեց ժամվա ընթացք, ինչը կարեւոր է նաեւ բանակի տեղաշարժի համար. Երկրորդ, այդ խճուղու մասերում գտնվում են խայզեթիկ, Աղավնատուն եւ մյուս գյուղերը, որոնք այժմ շենանում են վերաբնակիչների կողմից.

Միությունն այժմ ընդարձակել է իր աշխատանքները. Արդեն վերաբնակեցվել է Վրաստան-Թուրքիա սահմանամերձ հայկական եղեսդեր գյուղը. Միության նախագահ Հայկ Սինասյանը վերջերս ժնեւում կայացած եկեղեցական միջազգայնական խորհրդի նիստում ներկայացրել է «Շենի» երկու ծրագիր, որոնցից մեկը ստացել է համաադատական հավանություն՝ 18 հազար դոլար.

«Շեն-Ֆրանսը», միության ծրագրերն իրագործելու նպաստակով, գեղեցիկ առիթություն է դարձել ամեն տարի դեկտեմբերի առաջին կեսին Մեարի «Սամվել Մուրադյան» միությունում վարժարանում կազմակերպել տոնավաճառ.

Գործի նկատմամբ հանդես բերված աշխատանքի մեծ մասի իրագործումն է, եւ միությունը կատարում է մեծ աշխատանք, որի արդյունքն արդեն, անվանաբար, այնքան էլ տեսանելի չէ, սակայն արդագործ անդարձման անհնար կլինի.

ՍԵՐԳԵՅ ԽԱՉԱՏՐՅԱՆ.
«Դոյչե վելլե», 18 դեկտեմբեր

Խնխիշխան «նավատեր» Արմենակ Հայրապետյանը հետախուզվում է Ինտերպոլի կողմից

ԵՐԵՎԱՆ, 19 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Օրերս Ազգայնեաց լար տարածեց գյուղնախարարության Կալիֆոռնիայի ներկայացուցչության հաշվեկշռում գտնվող երկու ձկնաստական նավերի ճակատագրի մասին. Դրանցից մեկը 1995 թ. խարակիել է Լիբերիայի Մոնրովիա նավահանգստում, մյուսն անհայտ վիճակում գտնվում է Գվինեայում. Տեղեկությունը հետաքրքիր էր. պարզվում է Հայաստանը մինչև վերջերս ձկնորսական, բեկուզ փոքրիկ, նավատորմ է ունեցել, ընդ որում որսատարածքի զարմանալի մեծ աշխարհագրությամբ.

Արմենակի բրիգադիրը վարձել է [illegible] մանրամասներ եւ խնայալ հետեւյալը. 1994 թ., երբ մեկնվեցին սենդի եւ մերոնների նախարարությունները հանակարգի ղեկավարությունը, հետաքրքրելով խնն ենթակա ներկայացուցչության գործունեությամբ, պարզում է, որ այն աշխատում է արդեն իմնարույն կատարյալ. Բնականաբար, նախարարությունը միջոցներ է ձեռնարկում իմնիշխան տնօրենին սպառիպենելու, ներկայացուցչության գործունեությունն իրեն ենթարկելու, նաեւ բարեկավելու որդրությամբ. Նշանակում է նոր տնօրեն.

Սակայն այդ 1993 թ. մարտի 12-ին նախկին տնօրեն Արմենակ Հայրապետյանը, առանց դեկավարությանը տեղյակ պահելու, դուրս է գալիս Մարմանայի «Լոյդ» ֆիրմայի հետ. ձկնարտական երկու նավերը մեկ տարի ժամկետով վարձակալության հանձնելով նրան. Միեւնույն ժամանակ իրեն նշանակում է նավերի [illegible] վրից մեկի հրամանատար.

Երբ նոր տնօրեն Հանրիկ Ստեփանյանը մեկնում է Կալիֆոռնիա, պարզվում է, որ իր նախարդը Ա. Հայրապետյանը խոցել է կաղերը նախարարության հետ. իմնարդումս «սեփականաբերտիկ» նավերը եւ օգտագործում է սեփական հայեցողությամբ. Նախարարության դեկավարությունը մի քանի անգամ փորձում է հեռագրերով, հեռախոսով զանգերով նարահայց «Մոնտե Ռեալտի» հայազգանունի միջոցով կապվել նրա հետ, պահանջում է հետ վերադարձնել նավերը, սակայն ապարդյուն.

1994 թ. օգոստոսին պարենի եւ մթերումների նախարարությունը դիմում է արտգործնախարարությանը խնդրելով դիվանագիտական ճանապարհներով օժանդակել որոնումներին եւ վերադարձնել Հայաստանի սեփականությունը հանդիսացող ձկնորսանավերը. Արդյունքում պարզվում է, որ նավերը գտնվում են Սենեգալում, եւ նոր տնօրեն Հ. Ստեփանյանի Սենեգալ կատարած գործուղումից հայտնի է դառնում, որ դեռեւս 1995 թ. աղրիլին «Մուզը» խարակիել է, իսկ «Վանը» գտնվում է Գվինեայում.

Ինչ վերաբերում է նավերի տեխնիկական վիճակին, ապա, ըստ գյուղնախարար Արամիկ Ստեփանյանի, դրանք մինչեւ ձեռք բերելն արդեն 20-30 տարի շահագործված, բարդարար մաշված. 40-50 տոննա տարողությամբ ձկնորսանավեր են. Բարդմիայն ընդամենի վերանորոգման են ենթարկվել, եւ փախուստի մեջ գտնվող «նավատեր» ժամանակին զանգատվել է, որ իր դրանցից ստացված օգուտն ավելի քիչ է եղել, քան վնասը.

Իրավապահարան մասնիններն իրենց վերաբերմունքը կարտահայտեն դեռեւս 1995 թ. հանրապետության դատախազության կողմից հարուցված քրեական գործի քննության ավարտից հետո. Իսկ առայժմ վախտասի մեջ գտնվող Ա. Հայրապետյանը հետախուզվում է Ինտերպոլի կողմից.

«Ազգի» կողմից.– Չարտացնում է Արմենակի անհեղկությունը Հայաստանին ոստիկանով 2 ձկնարտանվերի կատարելագործման: Դեռեւս 1992 թ.-ին մեր ձկնարդյունաբերության մասին «Ազգի» հրապարակած տարբեր հարցազրույցներում այդ մասին խոսել է. 1991 թ.-ին Հայաստանի կառավարության կողմից հատկացված էժան գնով այդ ձկնարտանվերի ձեռքբերումը ժամանակին հանարվում էր հույսով գործարք, որ Հայաստանին երբ ոչ ձկնամթերք մեկ անգամ ներկրված 60 տոննա ձուկը փչացավ մեր ոստիկաններից մեկում, գոնե որոշ եկամուտ կարող էր առաջանալ. Այժմ ելնելով մեղադրներ գտնելու ժամանակը. Սակայն չոչեմ է մոռանալ, որ մի քանի տարի առաջ եղել են նաեւ միայնական սխալ տնօրինումներ. երբ ձկնարտանվերը մեկ դրվել են մի կոմբինատներից մեկի. մեկ ոչտոտ բանջարեղենի գիրուտայությունների տնօրինության տակ. մինչեւ նավերը լցրացել են հետո հանումներում. Իսկ այսպես, դրանց մեկը հայտնվել է օվկիանոսի հատակում.

ԱԶԳ

Կարծիք

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՏԱԼԻԱ

Պատմական հիշողությունների գոյությամբ

Մեկ տարուց ավելի է, ինչ Հռոմում գործում է Հայաստանի Հանրապետության դեսպանատունը, որի կազմավորման աշխատանքները սկսվել են ավելի վաղ՝ 1993-ի փետրվարից: Իտալիայում Հայաստանի Հանրապետության ժամանակավոր հավատարմատար է նշանակվել Գագիկ Բաղդասարյանը: Մեր գիտական ու մշակութային շրջանակներում հայտնի մտավորականներից մեկն է Գ. Բաղդասարյանը, որ դեռևս 1986-87 թթ. Ֆլորենցիայի համալսարանում գիտական վերապատրաստության շրջանը օգտագործել է նաև իտալերեն սովորելու համար: Այդ ասպարեզում խորանալով հիմնական աշխատանքին զուգահեռ սկսել է թարգմանություններով զբաղվել, հայ ընթերցողին ներկայացրել իտալական ժամանակակից պոեզիայի, արձակի և դրամատուրգիայի առավել այլի ընկնող գործերը: Բանաստեղծ Արմեն Շեկոյանի հետ տեղազրության է պատրաստել և հրապարակել Սալվատորե Կվազիմոդոյի, Ալդո Պալացեսկիի, Լուիջի Մալերբայի, Ջուզեպպե Ունգարետտիի, Ումբերտո Սաբայի բանաստեղծությունները: Լույս են ընծայել «Էջեր 20-րդ դարի իտալական պոեզիայից» ժողովածուն, Ալբերտո Մորավիայի «Պատմություն նախապատմության»-ը, ինչպես նաև Էդուարդո դե Ֆիլիպպոյի «Ուրվականները» (բեմադրվել է հայկական հեռուստաալիքներում) և Համազգայինի թատրոնի խաղացանկում տեղ գտած «Սանիտայի թաղամասը» գործերը: «Դիվանագիտական աշխատանքներին անցնելուց հետո դադարել, թե՞ շարունակում է թարգմանություններով զբաղվել» հարցը Գագիկ Բաղդասարյանին չտրվեց, քանի որ զրույցն ընթանում էր զուտ հայ-իտալական հարաբերությունների զարգացման շուրջ:

– Հայ-իտալական կապերի վաղեմի հիմքը հարվի առնելով, ենթադրվում էր, որ երկու երկրներում էլ փոխադարձաբար դեսպանատուն բացելու փաստն ավելի վաղ պետք է գրանցվեր: Եվ եթե Հռոմում արդեն գործում է Հայաստանի դեսպանատունը, ապա Իտալիան այդ բացը շարունակում է պահել:

– Դա միակողմանի լուծվելիք խնդիր չէ: Հայաստանի կառավարությունը, արտաքին գործերի նախարարությունը վաղուց են Իտալիայի համապատասխան հասցեներին ներկայացրել երևանում դեսպանատուն բացելու առաջարկը, բայց ծգծգվում է Իտալիայում տիրող քաղաքական ու տնտեսական վերափոխումներ է ունեցել Հայաստանի հանդեպ: Հանկարծ երկրաշարժից հետո Իտալիայի ցուցաբերած աջակցությունը եթե ամենամեծը չէր, ապա հաստատապես նշանակալիներից էր: Այսօր էլ Իտալիան շարունակում է հիմնավոր, բազմաբնույթ էական ներդրումներ անել Հայաստանում:

– **Փաստորեն երկրաշարժից անմիջապես հետո ապեցի զոհու վերականգնողական աշխատանքների սկզբնավորողները իտալացիներն էին, առանձին թաղամասեր, գյուղեր, դպրոցի, հիվանդանոցի, հասարակական ու կենցաղային նշանակության բազմաթիվ շենքեր կառուցեցին: Փլուզված ու վնասված ոլորտական հուշարձանների նորոգման առաջին ծրագիրն էլ իրենք ներկայացրին: Շարունակական բնույթ կրող այս գործողությունը երևի թե հիմնավոր բացատրություն ունի:**

– Կարծում եմ այս ամենը դասական հիշողությունների, մշակութային հսկայական ավանդույթների գոյությամբ է բացատրվում: Իտալիայում ամենուրեք զգացվում է հայերի ներկայությունը: Հյուսիսից հարավ, որ էլ գնաս, դեպի վաղ միջնադար տանող բազմաթիվ հիշատակների կանգնիկներ, որոնք վկայում են թեև կիսով ամբողջ տարածում հայերի բնակության մասին: Իտալիայում հատատուն հայկական եկեղեցի է կառուցված: Հոգևոր այդ շինությունները գրավիչ ու արժեքավոր են ոչ միայն ճարտարապետական արվեստի արտահայտչամիջոցներով, այլև իրենց շուրջ հյուսված ավանդապատումներով: Հայերը հիմնավորվել են Իտալիայի այնպիսի խառը հարաբերություններում, ինչպիսիք են Հռոմը, Միլանը, Ֆլորենցիան, Մենեգիկը: Հայերի ներկայությունը այդ երկրում դայմանավորված է օր. Դանթեի կրքում Մխիթարյան միաբանության շատ կարևոր գոյությամբ: Այսօր էլ իտալահայերը, հավատարիմ դարեր առաջ սկզբնավորված ավանդույթներին, իրենց լուրջ մասնակցությունն են բերում Իտալիայի հասարակական ու քաղաքական կյանքի զարգացմանը: Կրթվածության բարձր աստիճան, բավական երեսելի դիրք ու հարգանք վայելող մարդիկ են, որոնք նաև հայանպաստ գործունեությամբ են հայտնի:

Իտալահայերը, բարեբախտաբար, գեցցոյանման խմբավորումներով չեն զբաղվում: Գուցե դատճառն այն է, որ փոքրաթիվ են ու տարբեր քաղաքներում են հաստատված: Միմյանց հետ հարաբերվում են «Իտալահայերի միություն» կազմակերպության միջոցով և մի տեսակ սեռեդ-սերունդ փոխանցվող կարգերով: Մասնավանդ որ նորեկներով նրանց շարքերը չեն համալրվում որքիս գաղթօջախների դեպքում:

– **Տարօրինակ փաստ է, մանավանդ եթե նկատի ունենանք վերջին շրջաններում հատկապես բնիրպահայերի և նախկին ԽՍՀՄ հանրապետություններից ու Հայաստանից դեպի Եվրոպա սկսված մեծ հայրենակիցների հոսքը:**

– Իտալիան բանկ երկիր է: Աղբերը հեշտ չէ: Մեծ մրցակցություն կա:

– **Այստեղից, Հայաստան-Իտալիա միջդետական հարաբերությունները խորանում են: Թեև հանրապետությունն ավելի շատ տեղյակ է մշակութային իրադարձություններին:**

– Պարզապես մշակութային իրադարձությունները ավելի նկատելի են լինում: Մասնավանդ երբ վերաբերում են մեր արվեստագետների մասնակցությանը Իտալիայում անցկացվող արվեստի միջազգային բիենալեներին կամ երաժշտական մրցույթներին: Հատկապես ուզում եմ շեշտել Վալենտինա Բուկի անվան միջազգային մրցույթին Երևանի «Սերենադ» կամերային նվագախմբի (գեղարվեստական ղեկավար Էդ. Թոփչյան) մասնակցությունը: Հայտնի է, որ նման մրցույթներում ծափահարություններ չեն լինում: Բայց «Սերենադի» ելույթի ավարտին կարգ խախտողներ հենց ժյուրիի անդամներ դարձան: Համերգից անմիջապես հետո առաջինը ինձ մոտեցավ ժյուրիի կազմի Թուրքիայի ներկայացուցիչը, որը Իզմիրի սիմֆոնիկ նվագախմբի ղեկավարն է, ճանաչված երաժիշտ և հարցրեց. «Ձեր հայրենակիցներ որտե՞ղ են մասնագիտական կրթություն ստացել»: «Չի կարող դատահել», բացականչեց նա, երբ լսեց «Երևանում» դատասխանը: Եվ ավելացրեց. «Նրանք Բեռլինի կամ Մոսկվայի երաժշտական դպրոցի մակարդակ են ցուցաբերում»: Հետո հայ երաժիշտներին իր հայրենիքում ելույթի առաջարկ արեց: Նման հաղթանակներ դժվար է միայն մշակութային երևույթ կոչել: Ավելի քան մեկ տարի առաջ իտալական հեռուստատեսության 3-րդ ծրագրով ցուցադրվեց Իտալիայի վավերագրողների Հայաստանում նկարահանված «Մեկ քարերով եկեղեցիներ» հեռուստաֆիլմը: Գեղագիտական նուրբ կառուցվածքով, հարուստ բովանդակությամբ այդ կինոնկարի վերջում հեղինակները կոչ են անում իրենց հայրենակիցներին վերադառնալ հայերի հետ ունեցած մշակութային արմատներ: Եվ դրանք ֆիլմի ավարտի համար

ոչ թե տվյուռանայ բարերարների աջակցությամբ, այլ աշխարհում բնդունված կարգի համաձայն: Բոլորն էլ գիտեն, որ նախ պետք է նկարչին ճանաչել տալ: Մերոնք այս հանգամանքը չգիտակցելով ուզում են, որ միանգամից բարձր գներով իրենց գործերը գնվեն: Պետք է հաշվենք այն մտքի հետ, որ անուն ունեցող հեղինակների գործերն են գնվում, արժեքավորվում: Ուրեմն, նախ պետք է միջազգային շուկա բերելով ծանոթացնենք մեր նկարիչների գործերը, առա նոր միայն գին առաջարկենք: Իսկ սա տարիների աշխատանք է պահանջում:

– **Այդ առումով կարելի՞ է ասել, թե հայ քանդակագործներն արդեն որոշ իմիջ ունեն Իտալիայում: Ես նկատի ունեմ Ռավենայում Դանտեի կենտրոնի կազմակերպած քանդակի միջազգային բիենալեներին մերոնց մասնակցությունն ու բարձր մրցանակներ շահելը:**

– Դժբախտաբար ոչ: Նախ այն պատճառով, որ Ռավենայի բիենալեն, նշանակալից հավաք լինելով, այդպահանջող սահմանափակ շրջանակներ ունի: Այդպիսի ցուցահանդեսի սահմանները նեղ են այդ իմիջը ստեղծելու համար: Ճանաչում, համբավ ու գնահատական ձեռք են բերում այն արվեստագետները, որոնց անուններ տեղ են գտնվում արվեստի միջազգային հարստաններում, ցուցադրվում աշխարհի բանգարաններում և մասնավոր հավաքածուներում: Այս տեսակետից մեր թույլ տված սխալներ պետք է ուղղենք:

– **Ի՞նչ սխալների մասին է խոսքը:**

– Որ մենք այս վերջին տարիներին մեր լավագույն արվեստագետների ստեղծագործությունները հավաքելով բերեցինք Հայաստան: Այսինքն, նրանց ներկայացնելու աշխատանքը հանրային տարածքի փոխարինեցին մեր երկրի տարածքի չափով: Մինչդեռ ճիշտ կլիներ, որ, օրինակ, Մարտիրոս Սարյանի գործերը մնայուն աշխատանքի տարբեր ցուցասրահներում և մասնավոր հավաքածուներում, այլ ոչ թե արվեստաբանների տեսական մի քանի հոդվածներով ներկայացվեին: Ցավոք, հայկական արվեստի գործերը մի տանիքի տակ հավաքելու այդ եղանակը դեռ կիրառվում է: Հիմա էլ Արվազովսկու գործերն են փորձում հավաքել մի տեղ:

– **Դուք համոզվա՞ծ եք, որ Եվրոպայի, առհասարակ, նույն Իտալիայի մշակութային և տնտեսական համակարգերում գործող հզանակները կիրառելի են նաև Հայաստանում:**

– Վստահ եմ: Հատկապես տնտեսական համակարգը լավագույնս կիրառելի է Հայաստանում: Իտալացիներին, օրինակ, հաջողվել է ստեղծել փոքր ու միջին ձեռնարկությունների հսկայական համակարգ: Դա իրենց ազգային հատկանիշներով պայմանավորված գործնական է: Բնավորությամբ մեզ շատ են նման: Նրանք էլ մեզ պես կոլեկտիվ աշխատանքի հանդեպ առանձնապես սեր չունեն: Բայց կյանքը իտալացիներին պարտադրել է դինամիկ, ավելի կազմակերպված ու նպատակային գործել: Զարկ տվեցին ընտանեկան ֆաբրիկաներին, կիսասակական արհեստների ու արվեստների, բերեն արդյունաբերության ձեռնարկությունների արտադրանքին: Եվ քանի որ շատ են ու բազմազան, մրցակցություն առաջացավ: Սեփական օգուտի, մասնական արտադրանքը պաշտպանելու համար ստիպված էին անընդհատ կատարելագործել, բարձրացնել որակը: Այնքան, որ արվեստի մակարդակի հասնող զարմանահրաշ գործեր են ստեղծվում: Վենետիկում տեսա, թե ինչպիսի բափով են կազմակերպվում ժողովրդական արհեստների և արվեստների զարգացման ու վաճառքը: Ընդ որում, դա ոչ միայն առանձին մարդկանց, այլ ամբողջ երկրին զգալի շահույթ բերող բնագավառներից մեկն է: Մենք նույնպես ժողովրդական արհեստների ու արվեստների դեպքում, արձաթագործության, խեցեգործության կամ բնկոլ հենց կոշիկի արտադրանքի մեր որակը վերականգնելու դեպքում իրոք նեղ խնդիր չենք ունենա:

– **Համագործակցության նման հեռանկարներ նախանշվա՞ծ են, թե՞ առայժմ միայն ծրագրեր են:**

– Իհարկե կան: Արդեն որոշակի պայմանագրեր են ստորագրվել: Իտալիայի տնտեսական ու քաղաքական կան նեղքին տասանումներ հաշվի առնելով նպատակահարմար գտանք համագործակցության կարգեր սահմանել նրանց նահանգների և մեր մարզերի միջև: Փառք Աստծո, Հայաստանում մարզերի համակարգ ստեղծվեց: Դա, փաստորեն, զգալի տնտեսական, գործունեության մեծ հնարավորություններ է տալիս:

Ի դեպ, սա նոր ձևավորվող, նոր սկզբնավորվող գործ չէ: Նման փորձ եղել է: Եղածը ընդլայնել ու շարունակել է պետք: Ժամանակին, օրինակ, Կարարա քաղաքը Երևանի հետ լուրջ, հիմնավոր կապեր ուներ: Հիմա ուղղակի հնարավորություններն ավելի մեծ են: Հույս ունեմ, որ արդյունքները նույնպես մեծ կլինեն, մանավանդ որ իտալացիներն մեր տնտեսության մեջ լուրջ ներդրումների համար բավականաչափ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում:

Մեզ մնում է այնպես աշխատել, որ Հայաստան եկող օտարազգի մարդիկ հավատան այս երկրում գործ ձեռնարկելու և սեփական շահերը պաշտպանելու բոլոր գարանտիաներ կան: Չմոռանանք նաև, որ, օրինակ, արեւմտյան երկրների չափանիշների համաձայնությամբ հզոր արդյունաբերություն ենք ունեցել:

– **Ունեցել ենք, ճիշտ է, բայց արդյունաբերությունը, արտադրությունը գրեթե բոլոր օբյեկտներդ դադարել են գործելուց:**

– Չեն գործում, բայց դա չի նշանակում, թե գոյություն չունեն, վերացվել են: Մեզ տրիբ մի բան է պակասում՝ գործ կազմակերպելու ունակությունը: Սա նույնպես մատնանշություն է: Ահա այս գործին մենք լավ չենք տիրապետում: Մենք մենն կոչվածը, եթե կա էլ, նոր-նոր է ձևավորվում: Փորձն է պակասում: Մենք նոր ենք ընթացքի մեջ մտնում և փորձ ու հմտության ձեռքբերելու ճանապարհներից մեկն էլ համագործակցության ասպարեզը պետք է դառնա:

